ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ Սյունիքի մարզ գ.Մեղրի Զ.Անդրանիկի 2, Հեռ. +374 286 4-34-23, +374 286 4-35-00, citymeghri@gmail.com, ՀԿՀՀ 09425378

«ՊՐՈ ՇԻՆ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ
ԱՇՈՏ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

«ԲԻԼԴԻՆԳ ԿՈՆՍՏՐՈՒԿՇՆ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ
Ա. ՄԿՐՏՉՅԱՆԻՆ

N Ե-2173
13 նոյեմբեր 2025թ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Մեղրի համայնքի կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման N ՍՄ-ՄՀ-ԲՄԱՇՁԲ-24/01 պայմանագիրը մասնակի՝ 65 562 410 (վաթսունհինգ միլիոն հինգ հարյուր վաթսուներկու հազար չորս հարյուր տասը) ՀՀ դրամի մասով, միակողմանի լուծելու մասին

Մեղրիի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ՊՐՈ ՇԻՆ» ու «Բիլդինգ Կոնստրուկշն» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի (այսուհետ՝ Կապալառու) միջև 29.03.2024թ. կնքվել է N ՍՄ-ՄՀ-ԲՄԱՇՁԲ-24/01 պայմանագիր, որի 1.1. կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է նշված պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «Նոնածոր բնակավայրում նոր մանկապարտեզի հիմնում» շինարարական աշխատանքները (այսուհետ՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 1.3. կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքներն սկսվում են Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն օրացուցային գրաֆիկի, իսկ Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են Պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով: Պայմանագրի թիվ 2 հավելվածով Աշխատանքի կատարման ժամկետ է սահմանվել 365 օրացուցային օր:

21.03.2025թ. Պայմանագրի կողմերի միջև կնքված թիվ 1 համաձայնագրով Աշխատանքի կատարման վերջնաժամկետ է սահմանվել 2025 թվականի ապրիլի 28-ը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ,

հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը, իսկ 2-րդ մասի համաձայն՝ պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և սույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

Պայմանագրի 3.1.4. կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է Պայմանագրի 1.3. կետով նախատեսված (ներառյալ՝ օրացուցային գրաֆիկը):

Պայմանագրի 3.4.1. կետի համաձայն՝ Կապալառուն պարտավոր է աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան, իսկ 3.4.5. կետի համաձայն՝ պայմանագրի 1.3. կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2. կետով նախատեսված տույժը:

Պայմանագրի 3.4.6. կետի համաձայն՝ պայմանագրի 3.1.4. կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3. կետով նախատեսված տուգանքը:

Պայմանագրի 5.1. կետի համաձայն՝ Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 96 804 000 ՀՀ դրամ, որից 16 134 000 ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Պայմանագրի 6.2. կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 տոկոսի չափով:

Պայմանագրի 6.3. կետի համաձայն՝ Պայմանագրի 3.1.3. կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4. կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1. կետում նախատեսված գումարի 0,5 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքը հաշվարկվում է նաև Աշխատանքի արդյունքը Պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն Պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

Պայմանագրի 6.4. կետի համաձայն՝ Պայմանագրի 6.2., 6.3. և 6.5.1. կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

Հիմք ընդունելով վերը նշված օրենսդրական կարգավորումները, Պայմանագրի համապատասխան դրույթները և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կապալառուն խախտել է Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը՝ Պատվիրատուն մասնակի՝ 65 562 410 (վաթսունհինգ միլիոն հինգ հարյուր վաթսուներկու հազար չորս հարյուր տասը) ՀՀ դրամի մասով, միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կկիրառվեն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Տեղեկացնում ենք նաև, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, իսկ նույն կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «(...): Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի [illegible] մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջ[illegible]ու տարի ժամկետով»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [illegible]ԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ